



ԲԱԶՄԱՎԷՊ

Ի ՏԱՐԻ, ԹԻՒ 8

1862

ՕԳՈՍՏՈՍ 1

ՀԱՅԱԴԻՐ

1-7 Նաւասարդի. 11-17 Օգոստոսի

Տօնք Նաւասարդի. — Պատկեր Տիրաւորն

Հայոց սրբազան տարեգլխին՝ բնութիւնն ծաղկափթիթ ծիծաղով կենդանացնէ զմարդիկ. իսկ քաղաքական տարեգլխին, որ է Նաւասարդն (օգոստոս) գրեթէ խամրած թումամ ինքն կենդանանայ ՚ի մարդկանէ: Տարւոյն տաքագոյն ամիսն՝ Հայոց բարեկենդանն էր, կաղանդ էր. կրօնական, զինուորական և աշխարհախումբ հանդէսներով՝ բարձրատափք, լեռնահովիտք և հովոցք Հայոց գարնանման գեղեցկանային. երկրիս կենդանագոյն կեդրոնն կ'երևար Հայաստան: Բազմաթիւ ՚ի դասս ժողովրդեան հողագործք՝ մեծ աշխատութիւն մը չունենալով այս եղանակիս, կրնան ցորեկուան տաքը անցընել իրենց և բնութեան ինամամ հովանեաց ներքև, ուր կու դիմեն ՚ի քաղաքաց այլ ա-

րուեստաւորք, զօրականք և ազատագունք: Եթէ դու այլ, Հայկակ, բաղդունիս այդոնց մասնակից ըլլալու, բարով գոհով վայելես. ապա թէ ինծի պէս զրկուած ես բնութեան դալար առաջատներէն, հովերէն զովերէն, հովտէն և սարէն, դիտէ զանոնք քու մենարանէդ: Այլէ, ինչ գոհ և հանդարտ ոմանք նստած պզտի ձեռագործի մը կու պարապին, քան թէ կ'աշխատին. ոմանք կու խաղան, կու խօսին. մէկն խոտերուն վրայ՝ երկրնցեր քուն կ'ըլլայ, մէկ այլն ջրերուն եզերքը կու զովանայ. ուրիշ մը՝ քիչ մը փիլիսոփայ կամ մելամաղձիկ՝ առանձին շքի մը տակ կամ առուի մը գլուխը նստած՝ կու կարգայ կու մտածէ. հոս տղայք կու ցատքըտեն, կու գլորին, կու պապկին. հոն ամբողջ ընտանիք մը առանց

սփռոցի սեղանի մը վրայ կու ճաշէ . այս կողմը երկու բարեկամք՝ երբեմն ծանր երբեմն թեթև խօսին . այն կողմը՝ երկու սիրելիք իրենց կարծած ամենակարևոր բանին վրայ կու խօսին , և 'ի հարկէ անանկ ձայնով մը՝ որ մենք չի լսենք : Հոն բանակած է այրարատեան աստուածահրաւէր գունդն այլ ազգային աշխարհապահ զինուորք 120,000⁶ չափ ժողոված ըստ աշխարհաց և նախարարութեանց հայոց , իրենց իշխանաց և հայոց թագաւորին հետ , կատարելու Նաասարդի փոները . տօնք աստուածոց պահպանաց , յիշատակք քաջաց նախնեաց , մրցանք կործաց , խաղք և վայելք հասարակաց . զոր 3000 տարւոյ չափ կատարեցին մեր ըստ աշխարհի երջանիկ նախնիքն , թնդացին դոփեցին Ռագրեանդայ տափերու և բլուրներու վրայ , մինչև ծածկեցան անոնց տակ : Եւ երբ հայկայ և Ահազանի օրերուն խորհրդակատար քրմապետաց տեղ՝ փոխանակեցին խաչապսակ քահանայապետք , մեհենաց վրայ եկեղեցիներ կանգնեցին . բայց անոնց չորս դին և դուրսը նոյնպէս մնաց . բնութիւնն իր կերպարանքը չիփոխեց , ազգն իր հանդէսները չիփոխեց . այլ սրբեց տօները , և փոխանակ դից՝ նուիրեց ճշմարտին Ռատուծոյ և նահատակաց նորա : Կրթութէ անկարելի էր՝ որ Ա. Կրիգոր զհայս 'ի հեթանոսութենէն դարձնելով 'ի քրիստոնէութիւն , այն հին մեծահանգէս աշխարհաժողով զբօսազուարճ՝ օրերը՝ անհանգէս անյիշատակ թողու . ուրեմն թէ ինքն և թէ իր հետևողքն՝ անոնց իւրաքանչիւրին տեղ՝ կերպով մը նման և յարմարագոյն սուրբ տօներ և եկեղեցոյ յիշատակներ կանգնեցին : Ընչուան որ քրիստոնէութիւնն աղէկ մը ամբնալով և ժամանակի երկարութեամբ հին սովորութիւնք խափանելով , կրցան յետագայ առաջնորդք՝ այն եկեղեցական տօնից օրերն այլ պատշաճապէս փոփոխել , շատն այլ դարձեալ նոյն առաջին հեթանոսութեան տօնից օրաթուին թողուլ :

Մասսարդի նախընթաց հինգ օրերուն սկիզբը (որ Աւելեայ կ'ըսուին) նուիրեալ էր Վարդաճղի Վարդաճափ դիցուհւոյն ԱՍՏՂԸԿԱՆ , որոյ փոխան հայրապետն հայոց կարգեց զԱՐԴԱՎԱՌ . որ է տօն Պայծառակերպութեան Վրիստոսի , զոր քան զամենայն ազգ պայծառապէս տօնեն հայք մինչև ցայսօր : Իսկ նաասարդին առաջին օրն (11 օգոստոս) որ է քաղաքական տարեգլուին հայոց , ազգին ամենէն մեծ պանծալի , սրբազան օրն էր , և հանդէսքն շատ օրեր կու տուէին , պէսպէս յիշատակներով , որք միով անուամբ Ամանորայ կ'ըսուէին , իբրև սրբազանեալք յատուկ Ռատուծոյ մը . քաղաքօրէն այլ համաշխարհական կամ աշխարհաժողով կ'անուանէին . վասն զի ուրիշ տօներէ աւելի կատարուէին , բազմութեամբ մարդկան , որք յամէն գաւառաց կու գային ժողովէին Ռագրեանդայ բարձրաւանդակաց վրայ . թագաւորն իր այրարատեան չորս բիւր գրնդոփն , նախարարք ութ բիւր գումարտակօք , 600 գաւառատեարք և 400 գահակալ իշխանք , բազմութիւն կրօնական աւագ պաշտօնէից , ամէնքն իրենց սեպուհներով , պաշտօնէիք , ճորտերով . որով միայն քաղաքական , զինուորական և կրօնական ազգային հանդիսացեալք իրենց մարդիկներով , քանի մը բիւր կ'ըլլային զատ 'ի հասարակ զօրականէն : Իսկ բազմութիւն ազնուաց և ռամկաց՝ քանի մը միլիոն պիտի ըլլային :

Ինչ էր այս հայոց համաշխարհական տօնից պատճառն . — քեզի անծանօթ չէ , հայկակ , որ նախ հին նաասարդն կամ տարեմուտն էր . որոյ սկիզբն և անունն անգամ մթութեան ամպոց մէջ ծածկուած է , որք ինչուան Վոյի տապանակիր գագաթը և դարբ կու բարձրանան . Նաասարդն որ հին հնդիկ և զանդիկ լեզուաւ նաասարդոս սուգաբանի , այսինքն Նոր-գարի , նոյն հին ազգին աւանդութեամբ , յիշեցնէ ջրհեղեղի յիշատակն այլ . Սարգս որ և Սարգսճարի մեծի Պրահայ աստուածոցն դուստր և կինն ճանաչի , և ջրոց գիցու-

հի, ոստիկան աղբերականց և գետոց .
 ապա, ք, Վասասարգի օրերը՝ կ'ըլլային
 պէսպէս ջրախաղք, իբրև տօնք ջրոց
 կամ յիշատակ ջրհեղեղին և փրկու-
 թեան մարդկան տապանաւն 'ի լերինս
 Ղրարատայ . ուր մինչև ցարդ կատարին
 յայն կողմն բնակող այլազգեաց : Իսկ
 մերազնեայք հիմա վարդավաւին օրը
 կատարեն ջրոց հանդէսն այլ, որպէս
 յայտնի է ամէնուն . ք, տօն էր յի-
 շեալ Ամանորայ ամենաբեր դից, զոր բերոց
 և աւատութեան իննամակալ չաս-
 տուած մը կարծեմք . և կամ ք, չաս-
 տուածահայրն Աբաֆայք և Անահիտ տի-
 կինն . վասն զի ասոնց տօնն այլ մաս-
 նաւորապէս առաջնոյն՝ այսօր կատա-
 րէր : Ղ, յս չաստուածներէն զատ ուրիշ
 շատ դից մեհեանք այլ կային Ղագրե-
 ւանդայ մայրաքաղաքին կամ գլխաւոր
 բնակութեան տեղ, որ և այն կ'ըսուէր
 Բաֆաան, այսինքն չաստուածոց-քա-
 ղաք կամ շէնք . իւրաքանչիւր դից
 սեղանք կամ մատրունքն այլ բազին
 կ'ըսուէին . և այս բազնեաց բազմութե-
 նէն ոչ միայն աւանն, այլ թուի թէ և
 գաւառն ողջոյն իր անունն առած՝ է Բաֆ-
 րանդ . իբրև բազարանաց բազարան,
 այսինքն բուն աստուածարան : Գից
 հետ դիւցազունք և դիցանուէր կամ
 սրբազան անձինք այլ հոն իրենց արժա-
 նեաց համեմատ բազին ունէին, ինչ-
 պէս որ կու վայլէր այլ նաւասարգի սօ-
 ները ամենախումբ համաշխարհական
 ընելու համար : Ղ, յս դիւցանուէր և
 պաշտելի անձանց մէկն էր, է . Մաթան
 մեծ քրմապետն, բարեբաստ թագաւո-
 լին Բ Ղրտաշիսի շատ որդւոց մէկն .
 զոր ոմանք յեղբարցն սպանին, ոմանք
 այլ մեծարեցին . ասոնցմէ էր Տիգրան
 Գ, որ երբ թագաւորութեան հասաւ
 յետ իր Ղրտաւազգ և Տիրանեղբարցն,
 Սաթանայ գերեզմանին վրայ դիցա-
 վայել բազին մը շինեց, քովն այլ հիւ-
 րանոց կամ իջեվան, ուր ձրի բնակին
 անցորդ ուխտաւորք, և վայելէն Սա-
 ժանայ նուիրած զօհերէն : Տիգրանայ
 որդին Ս աղարշ՝ այլ աւելի պատուեց
 քրմապետ հօրեղբօր յիշատակը, և նա-

ւասարգի ամանորայ տօները այլ աւելի
 աշխարհախումբ հանդիսիւ կատարել
 կու տար . որով այս տօնից գլխաւոր
 կարգապիւր կրնայ ըսուիլ . . . Ղայց մինչ
 դեռ Տիգրան և Ս աղարշ այսպէս եղ-
 բայրասպան Սաթանայ վրէժը խրնդ-
 րէին, սպանողն (և ինքն իսկ սպանեալ)
 Ղրտաւազգ՝ յետ մահուն անգամ
 միմուայր սպաննայր նոր վրէժ ինպրել
 և աշխարհախումբ տօնը համաշխար-
 հական սուգ դարձրնել, և տարւոյն
 հետ բոլոր աշխարհս այլ վերջացրնել
 տակն ու վրայ ընել : Ղրտաւազգ՝ ան-
 դրանիկ Ղրտաշիսի և Սաթանեան, տը-
 դայու թեանէն՝ ի վեր բոլոր կեանքը իսն-
 թուկ մեծութեան անցուց մոլութեամբ և
 յանդգնութեամբ, մինչև ժողովուրդն
 իրեն Շիտաբ կանչէր . անանկ որ հայրն
 գրեթէ սրտացաւէ մեռաւ, և մեռ-
 նելու ատեն, (առասպելք մեռնելէն
 ետև կ'ըսեն) անիծեց զնա, որ երբ
 որսի ելնէ “ յազատն 'ի վեր 'ի Սա-
 սիս ”, Ղաջերն (գէշ ոգիներ) բռնեն
 զինքն և տանին լեռան վերի կողմը
 մութ վհի մը մէջ պահեն . և այնպէս
 այլ եղաւ կ'ըսեն . թագաւորէն քիչ
 վերջը որսի ելնելով Սասեաց վրայ՝ Գի-
 նոյ գետակին աղբերոց քով ձիով հան-
 դերձ ընկաւ Սասեաց վհին մէջ, և
 Ղաջերն երկաթի շղթայիւք կապեցին
 զնա . բայց իր երկու որսի շներն քովէն
 չզատուելով անգաղար երկաթները կու
 կրծեն մաշեցնեն . անանկ որ տարւոյն
 վերջի օրը մազի բարակութեան և կոտ-
 րելու կու հասնի . բայց նաւասարգին
 օրը դարբինք և ամենայն արուեստա-
 ւորք իրենց սալը և գործիքը կու զար-
 նեն . այն ձայնէն երկաթները նորէն
 կու հաստընան, Ղրտաւազգ իր շղթայ-
 ից մէջ գերի մնայ, աշխարհս այլ ա-
 նոր աւերմունքներէն ազատ : Ղհա այս
 այլ ք յիշատակ մ'է նաւասարգի . զոր
 և յետ 300 տարւոյ՝ յիշելով սնակար-
 ծիք ոմանք 'ի քրիստոնէից, ոչ միայն
 նաւասարգին օրը, այլ և ամէն կիւրա-
 կի օրեր՝ սալերնին գործիքնին կու զար-
 նէին, որ զօրանան շղթայք շփացած
 Շ աղարին :

Լյուսամէն յիշատակներէ վերագոյն
 և հնագոյն և տօների յիշատակ այս օ-
 րուանս էր, է մեր շատ հեղ յիշեալ
 ՀԱՅԿՆ • մեր ազգին նախահայրն, և
 այնով՝ ազգերնուս ձևանալն, յաղթու-
 թեամբ ազատելով ՚ի Ռելայ բռնու-
 թենէն: Ուրիշ տեղ քեզի ցուցած եմ
 որ թէ ազգային աւանդութիւն, թէ
 Վաղգէացոց հին պատմութիւն, թէ
 մեր սոմարական տարեհաշիւք և թէ
 աստղաբաշխականք անգամ միաբան
 ցուցնեն, այս մեծ և ամենապանծ սօ-
 նիս սկզբնաւորութիւնը ՚ի 11 օգոստո-
 սի, 4354 տարի յառաջ քան զայս տա-
 րի • չկայ ազգ մը որ այսչափ ստոյգ հին
 և այսչափ պանծալի յիշատակ մը ու-
 նենայ, վասն որոյ կրնամք անուանել
 զսա բուն Օր հայկական և Տօն ազգային •
 որ այնքան երկար ժամանակէ դար վար
 իջնելով բարձր լերան գլխէն իջած
 ձեան հիւսիսնման, վերոյիշեալ յետին
 յիշատակները վրան աւնելով՝ այլ ա-
 ւելի մեծցեր է: Հայկայ մեծ քաջու-
 թեան և անուան համար էր որ իր յա-
 ջորդքն՝ նաւասարդի օրը իրենց ազգին
 ոյժը ներկայացնող կտրիճ՝ զօրաց աշ-
 խարհագումար հանդէսներ կ'ընէին •
 և այն մեծ անձին անունը մեր սուրբ
 Հայրք և թարգմանիչք իրենց հեթա-
 նոս հարց պատուադրութեանը հետեւե-
 լով՝ աւելի սրբացուցին և անմոռանալի
 ըրին, երկնից համաստեղութեանց և
 աստուածաշունչ զրոց մէջ դրոշմելով,
 ուր ուրիշ ազգք Որիոն զիւցազնը և
 աստղը կու յիշեն: Վրանի որ ազգային
 ինքնագլխութիւն կար՝ այս և այսոր
 հետ միացեալ յիշատակք կրկնուէին
 և հնչէին քրիստոնէութեան դար ու
 կէս տիրած ատենն, որչափ որ քրիստո-
 նէութիւնը կրնար յիշել • և որպէս զի
 բուն սրբազան կամ եկեղեցական տօն
 մը դառնայ, հայրն մեր Սուսաւորիչ
 գրեթէ ամէն տօներէ առաջ այս օրս
 նուիրեց Ս. Կարապետին Յովհաննոս և
 Աւանափինեայ եպիսկոպոս վկային, որոց
 նշխարքը բերաւ ՚ի Կեսարիոյ և ՚ի Սե-
 բաստիոյ • և նախ ՚ի Տարօն գաւառ գա-
 լով ու անոր կուստունները ջնջելով,

Լյուսուծոյ յայտնութեամբ՝ անոնց տեղ
 շինեց բերած սրբոց մատուռներ, եկե-
 ղեցիներ և վանքեր, որոց մէջ ամենէն
 նշանաւորն է Մշոս սուրբան ըսուած Ս.
 Կարապետին: Տարօնոյ երկիրն, սահմա-
 նամերձ Ղազարեանդայ, ուսկից կ'ըն-
 դունի զՂրաժանի գետն, անոր պէս
 այլ մեհենազարդ կրօնական երկիր
 մ'էր, և տեղի հանդիսից • ինքն այլ
 ունէր իր Ղազաւանն՝ Յարպիշափ կամ
 Յարպից քեղիք անուանեալ, որ է ըսել
 զօհերու տեղ, իր շատ մեհենայ և
 բազնաց համար: Սուսաւորիչ այնքան
 սուտ և մնասակար հանդէսներ խափա-
 նելու համար՝ պատուիրեց թագաւո-
 րական հրամանաւ, որ այնուհետեւ նա-
 ւասարդի հեթանոսական յիշատակաց
 տեղ՝ նոյն տարեմտին օրը՝ կատարուի
 այս երկու սրբոց յիշատակն, քաղաքա-
 կան հանդիսից մէջ առաջինին պէս:
 Լյուսպէս հին և անսուրբ սովորու-
 թիւնք դադրեցան • իսկ երբ Հայոց
 ինքնիշխանութիւնն այլ վերցուեցաւ,
 քաղաքական ազգային հանդէսք այլ
 դադրեցան, որով այս սրբոց տօնքն այլ
 ուրիշ շարժական տօնից կարգը մը-
 տան: Ղայց Նասասարդն, այսինքն Հայ-
 ոց քաղաքական տարեմուտն, 44 դարէ
 վեր միշտ դառնալով՝ Հայկայ աստեղ
 բարձրանալուն օրերը՝ անխափան կու
 յիշեցնէ մեր ազգային և հայկական օրը,
 զոր և արժան է մեզի՝ որ վիճակի մէջ
 այլ ըլլանք՝ անոր յարմար յիշել, սօ-
 նել և հանդիսացնել անմոռաց, որ-
 չափ որ ազգի և Հայու անուն և լեզու
 պահեմք:

Տարեգլխէն երկու շաբաթ ետեւ,
 նաւասարդի 15ին, հին Հայագիրն մեծ
 աշխարհախումբ տօն մ'այլ նշանակէր,
 Հայաստանի ամենէն սիրելի և ամենէն
 մեծ խնամակալ պահապանին, որ էր
 գիցուհին ԱՆԱՏԻՏ, մեծապէս պա-
 տուեալ և սրաշտեալ ՚ի Հայոց քան
 յայլ ազգաց • մինչև ոսկիէ արձաններ
 կանգներ էին անոր յարկաւ աւան ընդ
 մէջ Սեծ և Փոքր Հայոց, ուր շրջա-
 կայ ժողովուրդք այլ յուխտ գային,
 ուր և մեծազօրն Տրդատ ազատելով

զհայրենիս 'ի Սասանեանց բռնութեանն՝ համաշխարհական տօն և շնորհակալութիւն մատոյց և իր հրովարտակաց և խօսից մէջ կ'ըսէր. « Սեծի ՚՚ Նաճտայ տիկնոջ, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ. զոր և թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց. որ է ճայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, և ծընունդ է մեծին արին Ղրամազգայ... Սեծն Նաճիտ որով կեայ և կենդանութիւն կրէ երկիրս Հայոց... Ինամակալութիւն Նաճիտ տիկնոջէն (հասցէ ձեզ Հայոց)։ Այս տեղս էր մեծ և բռն մեծեմեանցն Հայոց Բաբայրայն. ուր պատուէր Հայաստանի Տիկինն, նաև յօտար ազգաց. կարծուելով 'ի Ատիկնաց Տիւնա (որ և աջ կողմէն կարդալով Նաիտ կարդացուի). 'ի Յունաց՝ Ղրտեմիս, 'ի Պարսից և մերձաւոր ազգաց մէջ այլ նոյն Նաճիտ անուամբ ճանաչուէր. բայց ամենէն աւելի Յունաց պարծանք Ղթենաս զիցուհւոյ նման ճանաչուէր. ինչպէս Տրդատայ գովութիւնն յայտնէ, և Պղատոն փիլիսոփայն այլ յայս կարծիս էր. սակայն անոնց Ղրտեմեայ, Բաբելացոց Սիւլիտտեայ, Փիւնիկեցոց Նստարտայ, Առսնի, Նստղկան, Հերայի և այլոց զից այլ զուգական սեպուէր. միով բանիւ ամենայն աստուածական հաճոյ յատկութիւն ճանաչէին Հայք յԱնահիթ քիկինն, և անոր համար մեծապաշտօն պատուէին. յայն պաշտօն հրաւիրէր Տրդատ և զՎրիգոր, որ քիչ ատենէն զինքը պիտի հրաւիրէր 'ի մեծագոյն և 'ի սրբազան պաշտօն, և անոր հաւանութեամբն՝ իջուցանելով զՆաճիտ 'ի տիկնութենէ Հայոց՝ տեղը բարձրացուց զմիայն արժանին 'ի պաշտօն յետ Նստուծոյ, զՆստուածածինն, արդարև երկնից և երկրի տիկին. և մեծահանդէս տօն մը կարգեց 'ի նոյն 15 նաւասարդի (25 օգոստոս). զոր հին տօմարք Աւեփան տօն կուգրեն, և այլք՝ առանց որոշ յիշատակի՝ միայն եկեղեցւոյ և Նստուածածնայ

տօն. որ յետ ժամանակաց փոփոխելով կամ խափանելով, մուռացութեամբ քաղաքական և անաստական հանդիսից, նոյն Նստուածամօր վերափոխման տօնին հետ խառնուեցաւ, զոր Հայք տօնեն ('ի կիւրակէի մօտ 'ի կէս օգոստոսի. իսկ այլք 'ի 15 օգոստոսի, որ է 5 նաւասարդի)։

Այս տօնիս նախընթաց օրը, որպէս յայտ է ամենուն, հիմա Հողախի տօնը տօնեմք, որ է Աջմիածնայ մայր եկեղեցւոյն նաւակատիքը, և Եկեղեցւոյ և Նստուածածնայ յիշատակ մը. զոր նոյնպէս սահմանեց Ս. Առսաւորիչն, և հաստատեց 'ի 4 նաւասարդի (14 օգոստ.) որ կամ իր տեսլեան օրն էր, և կամ հաւանօրէն՝ ուրիշ հին հեթանոսական տօնի մը օր, որոյ խափանիչ դրուեցաւ Հողախին, ինչպէս Աբրահամն այլ Նստղկան տօնին. և անոր պէս այլ գեղեցկութեան, վայելչութեան և պաճուճանաց յիշատակ մը, կամ դիցուհւոյ տօն մը գուշակել տայ անունն։

Թուի թէ ուրիշ տօն մ'այլ կամ թափօրի պէս հանդէս մը կար անկէքանի մը օր ետև, նաւասարդի եօթին (17 օգոստ.) ընդ մէջ Ղմանորայ և Նաճտի տօնից, որուն պատճառն անծանօթ է մեզի, բայց տեղը հաստատուած է ՏՕՆ ՊԱՏԿԵՐԻ ՏԻՐԱՄՕՐԻ. — Ինչ զարմանալի փոփոխութիւն և աննման յարմարութիւն։ Նստղկան և Նաճտայ ոսկէծղի ոսկէձոյլ ոսկիամայր անդրեաց տեղ, փայտեայ խոշոր անշուք պատկեր մը. բայց կերպարանածը անոնցմէ մեծ, աստուածային իսկուհւոյ մը, ոչ քեւ և դստեր կամ կնոջ դից, այլ Մօր Աստուծոյ, և անամուսին մօր. որ է ըսել կին և կոյս. միով բառիւ Կոստմայր. հրաշալի բան, բոլոր հեթանոսաց իմաստութենէն վեր. որք Նստղկայ և Նաճտայ նման մենասէր կոյսերը առին իրենց շնորհացը համար դարձուցին 'ի բող և 'ի բովը կանայս. քրիստոնեայն՝ կուսի մը գերագոյն շնորհք իր յաւերժ կուսութիւնը ճանչնալով՝ հաւատաց զնա մայր Նս-

տուժոյ, և միոյ միայնոյ Մատուժոյ. ուրով և միայն Տիրուհի երկնից և երկրի: — Ըստ տօնս հնագոյն է քան զՎրիգոր Առսաւորիչ, և ըստ բարեպաշտ և ընդունելի աւանդութեան՝ հաստատեալ ՚ի Րարդուղիմեայ առաքելոյ. որ զրկեցաւ ՚ի տեսութենէ Տիրամօրն անոր ննջմանը ատեն, բայց բազդաւոր եղաւ անոր սկզբնակերտ պատկերը ժառանգելու, և բազդաւոր բրաւ զՀայս անոնց ժառանգեցնելով: Ըստ պատկերս քանդակեր և նկարեր էր Յովհաննէս աւետարանիչ, և Տիրամայրն դնելով ՚ի վերայ երեսացն օրհնէր և թողեր յիշատակ առաքելոցն և աշակերտաց և ամենայն հաւատացելոց. զոր առաքեալք վասն միսիթարելոյ զՐարդուղիմէոս՝ անոր պարգև եցին. և նա իբրև տէրունական նշան մը հետը կու տանէր՝ ուր որ քարոզութեան կ'երթար յարևելս, ՚ի Հնդկաց մինչև ՚ի Հայս. և անով սուտ աստուածները կու վերցընէր, ճշմարտութիւնը կու հաստատէր. անով արևու նուիրական աշխարհին մէջ (Աորասան) զարև խաւարցընելով՝ անոր բազնին սպասաւոր մոզերը՝ աշակերտեց ՚ի պաշտօն Մրեգականն արդարութեան. և հետը բերաւ ՚ի Հայս և կարգեց առաջնորդ նորընծայ հաւատացելոցս: Սեր աշխարհին հարաւային արևելեան կողմերը պտրտելով, եկաւ այն բարձր և անծանօթ Տօրոսի կողմերը, որք Մըթամարայ ծովուն պարատափը կ'անջըրպետեն ՚ի բարձրահովտէն Տիգրիսի որոց վրայ ձմեռան զիզած բարդ բարդ ձիւներն ՚ի գարնան բազմավտակ հեղեղաջուր դառնալով, սաստիկ դնդընչ մամբ կու թափին թատերաձև լեռնապատ խորածորի մը մէջ և կ'երթան խառնուելու արևելեան Տիգրիսի ծոցը, որ այն կողմէն կու բղխէ: Արին և բռնութիւնն աւելի ահեղ տեսարան մը կ'ընծայէր այդ դժուարակիտ ահաւորատես կոհակացեալ լեռանց՝ քարաշէն ամպադիտակ բերդերով. որոց մէջ անուանի էին երկուքն, Կանգոսար կամ Ագոսատար և Դարբնացար: Ըն-

նութեան և բռնութեան ահեղութեան վրայ աւելցուց կռապաշտութիւնն իր պատկառանքը և արհաւիրքը. յիշեալ գագաթանց մէկուն վրայ կազնած էր տիկինն Հայոց՝ Մնահիտ. բայց ոչ ինչպէս Այրզնկայ՝ ծաղկանց և մարմանդից մէջ խաղով ծիծաղով նապելով, այլ իբրև տեղւոյն դժուարութենէն, ամառուան կայծակներէն և ձմեռուան սառամանիքներէն, ապառաժից ժանտութենէն՝ խոժոռած դժնէհայեաց դշտոյ մը կ'երևար. որոյ շանթերը կայծակները կու ցատքեցընէին խաբէբայ քուրմք, քարայրի մը մէջ քաշուած, ստէպ ստէպ մեծամեծ կռաններով սալեր սարեր զարնելով թնդացնելով և կայծ հանելով: Արչափ որ ահաւոր և դժոխեւանելի էր այս տեղս՝ այնքան այլ յաճախելի ուխտատեղի մը եղած ժողովրդեան. որ աւելի սոսկմամբ քան սիրով կու քշուէին գային հոս՝ իրենց ցաւերուն կամ իղձերուն համար ճարու ճարակ գտնելու. խաբէբայ քուրմք այլ կու տային անոնց աղտեղի դեղեր և ծրարներ, այլանդակ կուց արձաններու ձեռքէ: Ընչա այս տեղս եկաւ Առաքեալն Րարդուղիմէոս Աորասանէ դարձած ատեն. և Տիրամօր պատկերն բաւական եղաւ ամէն բան դադրեցնելու. դարբնաձայն թնդմունքն լուցին, կայծելին մարեցան, կուռքն կործանեցան, Մնահիտ անյայտ եղաւ. իսկ անոնց պաշտօնեայքն սրտմտած կու գէնէն քարկոծել զառաքեալն և իրեն հետ եկող հաւատացեալքը. իսկ նա փոքրիկ իտալով մը ամէնուն յաղթեց, առաւ անկեց Մնահայ տեղ, և ամէնքը փախան, չիք եղան. և անկէ ետև այն իսկ չին երկրպագէին, մինչև յետ 250 տարւոյ Առսաւորիչն եկաւ յարգութիւն առաւ զայն՝ իբրև յիշատակ առաքելական, և հետը կու տանէր, ինչուան որ առանձնացաւ ՚ի Սեպուհ. յետոյ գարձեալ այս կողմերս բերին այն խալը և կանգնեցին ՚ի վերայ գերեզմանի ահեղազօր թագաւորին Տրդատայ, մարմինը հոս փոխադրելով ՚ի լճորդանայ՝ Ըսն ափափայ լեռներուն վրայ էլ-

նել յաղօթս և յուխտ՝ չարաչար աշխատանք և սրաշօն էր . անոր համար Ս . առաքեալն իր հրաշագործ Տիրամօր պատկերը պահեց այն լերանց ձեւացուցած խորածորին մէջ , ապահով ու ծածուկ խորշ մը , որոյ մօտէն կ'անցնի լերանց հոսանքէն ձեւացած Տիգրիս գետն . այն քարէ դարերուն մէջ իր ձեռքն փոքրիկ եկեղեցեակ մը շինեց ու հոն դրաւ հրաշալի Պատկերը . քովն այլ քանի մը խրճիթ կամ ծածկարան շինել տուաւ , և բոլորը մէկէն անուանեց ՀՈՒԵԱՑ ՎԱՆՔ . ուր բնակեցուց նորընծայ կուսանք , զորս 'ի Վողթն գաւառէ բերած էր հետն . և անոնց յանձնեց Տիրամօր պատկերը և մատուռ . իսկ նորահաւատ քրիստոնէից այլ հովիւ քահանաներ ձեռնադրեց , որք աւելի գաղտուկ կ'երևային քան թէ կուսանքն : Երանց առաջնորդ էր Մաբթա՛ քոյրն Յուսկան կամ Յուհատայ , զոր առաջին Տայրապետ կրնամք անուանել . որ և յետ շատ տարիներու ուզելով բոլորովին առանձնացեալ ապրիլ թողուց Հոգեաց վանքը , և գետոյն դիմացի կողմը անյնելով , քարայրի մը մէջ խցիկ մը շինեց , հոն ձգնեցաւ , հոն մեռաւ և թաղեցաւ : Իսկ իրեն տեղ մայրապետ դրաւ զԱննա , Արմզատայ կամ Սազատայ և Սաքովորի քոյրը . որ նոյնպէս քանի մը տարի հոգալով կուսաստանը և վանքը , յետոյ առանձնացաւ ուրիշ կողմ մը , Կարբնաքարի ձորոյն այն դին , և ինքն այլ հոն իր խրճիթին մէջ վախճանեցաւ . իրեն յաջորդ թողլով իր քոյրը Մարթա . որուն ուրիշներն այլ յաջորդեցին . և միշտ հաւատացեալք , թէ և սակաւաթիւ , մնացին հոն , ինչուան Հայոց աշխարհօրէն զառնալն 'ի Վրիստոս : Ասկից քանի մը տարի առաջ՝ Հռիփսիմեան կուսանք այլ եկան հոս ուխտի , և միթարուեցան իրենց պէս գաղտուկ կեցող հաւատարիմներէն : Երբայէս անկոխ անտես քարերու սրբերու մէջ ճշմարտութիւնը կու պահէին փափուկ կուսանք , մինչդեռ կայսերք և հսկայ թագաւորք կու հալա-

ծէին իրենց տիրած տեղերէն : Սախնալով որ հոս այլ չհասնի հալածանքն՝ Հռիփսիմեանք ստիպեցան թողուլ 'ի զգուշաւոր խաղաղութեան՝ իրենցմէ առաջ եկած Տիրամօր պաշտօնեաները և գնացին դէպ 'ի կողմն Սանայ : Իսկ երբ Ս . Առաւորիչ սկսաւ քրիստոնէութիւնը համարձակ տարածել , Հոգեաց վանքն այլ հոշակեցաւ , լուսաւորեցաւ , հրաշքներով պայծառացաւ . որոց անձամբ ականատես վկայ ըլլալով սուրբ Հայրն մեր , ընդարձակեց վանքը և շինեց Ս . Իոն եկեղեցին . բայց առաքելոյն ձեռակերտ Տիրամօր տաճարիկը անարատ թողուց , նոյն ձեւով և մեծութեամբ , և նոյնպէս այլ մնաց գրեթէ ինչուան վերջը . բայց տեղն երթալով անուանի եղաւ , 'ի Առաւորչէ նորոգեալ . ուր յետ կուսանայ արք կրօնաւորեցան , և Հայոց անուանի վանորէից և ուխտատեղեաց և եպիսկոպոսարանաց մէկն եղաւ , և վանաց երէցն ու եպիսկոպոսն կոչուեցաւ Արթուրաճաճնի Պապիէրին առաջնորդ , որ նոյն է ընդ Հոգեաց վանաց . և երբեմն նոյն ընդ Անձեւացեաց եպիսկոպոսական աթոռոյն , որոյ առաջին 'ի պատմութեան յիշատակեալ եպիսկոպոսն է Աբիսողոմ 'ի Գ դարու մեծին 'ի Երսիսի օրերը : Երբ սուրբ հայրապետս այլ եկաւ հոս ուխտի և հետը բորոտներ բերելով բժշկեց Տիրամօր շնորհքովը , և հիւանդանոց մ'այլ շինեց ուրիշներու համար . որով երրորդ անգամ մեծ հաստատութիւն մ'առաւ սուրբ Պատկերին տօնն . զոր և յետագայ Հարք և եպիսկոպոսք հանդիսիւ կատարէին այսօրս (7 նաւասարդ , 17 օգոստ .) իբրև 'ի յիշատակի վերափոխման կուսին , որպէս թուի 'ի նոյն ինքն յառաքելոյն Արթողիմեայ դրուած և հաստատուած 'ի Ս . Առաւորչէն : Ինչուան 'ի վերջին դարս յուխտ և 'ի պատուի մնաց Հոգեաց վանքն , և Պատկեր Տիրամօրն , որք հիմա նոր հետազօտութեան և լուսափայլութեան կարօտ են , քրիստոնէութեան հնագոյն և առաջին ուխտատե-

զեաց, կուսաստանաց և վանաց մէկն
ըլլալով. զոր այսպէս ստորագրէ ահա-
նստես քերդող ոմն Սոկացի (Սեր-
սէս) մեզմէ երկու և կէս դար առաջ:

Վըշխար փայտին որ շնորհեցաւ
Բարդուղիմեայ վիճակեցաւ:

Եկեալ յերկիրն Մնձևացեաց՝

Եւ ի համբաւ քարի միոջ,
Յոր էր աղուէան ամրացեալ յորջ,
Ընդ Մնաստայ բնակէր տիկնոջ
Սարգախոշոջ կրուանագոջ:

Վանզի փայլակն ի վայր անկեալ՝
Ի դարբընաց քըրայս արկեալ,
Օղեղն որ կազմէր ախտիւ խառնեալ
Յուռութուրունս մակարդացեալ:

Որպէս ի ճառքն պատմական
Ուսուցանէ մեզ միաբան,
Եւ զվիշապին հին մեքենայն
Կիպրիանոս այր սրբազան:

Օ՛ի հին վիշապն անգրը բունէր
Եւ կրուանին համաձայնէր
Բախմամբ թնդման ահ արկանէր,
Օնոսա յուշոյ միշտ խափանէր:

Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Ընդ խոնէին գեգերաբար,
Թարախածոր առեալ ծըրար
Եւ կոչէին Վարբընաբար:

Յոր վայր հասեալ առաքելոյն
Փութով խափան առնէր գործոյն,
Վարբընաբար բախման թնդոյն,
Որ գործօնեայքն էին նիւթոյն:

Եւ զգիցամայրն խորտակեաց
Բզբունութիւն քակեալ դիւաց.
Վարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց:

Իսկ չար զինուորք գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձու լերինն,
Սիրգաս ի վիմաց յայն հոսէին
Ընդ այն և ճիչս արձակէին:

Բարդուղիմոս զայն տեսանէ
Բարձրաւանդակ լեառն ելանէ
Խաչ մի փոքրիկ անդ օծանէ

Վարիւ մի զքաջքն արտասանէ
Օ՛ որ և յետոյ սուրբքն Վրիգոր
Օարձանձ առեալ պահէր ընդ իւր,
Սնջ Տրդատայ մահուանն աուր
Երեսին եդ պըսակաւոր:

Կանգնէ և անդ կրկին նշան,
Յըստորոտով լերինն յայն.
Կարկառակոյտ մի սուզական
Չեւնագրրեալ ի մեծ արձան:

Եւ է տեղին յոյժ լեւնափակ
Պատեալ վիմօք երկնադիտակ,
Իսկ մէջ ծոցոյն հարթայատակ
Հոսանահէրձ վհաքատակ:

Օ՛ի Տիգրիսին մեծի կայլակ
Որ յՄքենայ քառորդ վըտակ,
Յասմամբ խաղայ միշտ համարձակ,
Ընդ գոգ հովտին արագարագ:

Սերձ կանգնաւոր մեծ ամրոցին,
Որ Մգուաւուց քար կոչէին,
Ուստի լերանցըն ջուրք հոսին
Եւ գետանան ստ գարնան մասին:

Վայ զառիվայր առապարին
Ընցեալ ընդ հիմըն տաճարին,
Ընդ արքային շիրմով պարին,
Ըրպա ի մի խառնեալ յարին:

Հիմն արկանէ անդ հաւատոյ
Ընդ խորանին կառուցելոյ.
Շինեալ յանուն կուսին հոգւոյ
Եւ պատկերին որ անդ սրբոյ:

Ընդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռին
Փոքրը ձեւով զէկեղեցին
Եւ անուանէ Մարտաճածին:

Օտեղին հոգոց-վանս անուանէ
Եւ ի քըւեր կանայս յանձնէ
Խորձիթ փոքրիկ նոցա շինէ
Եւ ի դերբուկսըն բաժանէ:

Կացուցանէ զքոյրն Յուսհատայ
Սայրպետ կրօնից գըլուխ նոցա,
Օքոյրն Մըրմզայ և Սաքովտրայ
Եւ զայլ կանայսըն յետ նոցա:.....

.....